

УДК 631.531.2:633.13

Գ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ, Է. Լ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ս. Ն. ԵՂԻԱՋԱՐՅԱՆ, Վ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ,
Ս. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԽՈՋԱՆԱՑԱՆ ԵԳԻՊՏԱՅՈՐՆԵՐԻ ՑԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Արարատյան դաշտավայրում և համանման այլ պայմաններում խոզանացան կուլտուրաների մշակումը վերջին տարիներում մեծ ծավալ է ստացել: Նրկրորդ բերքի ստացումը ունի տնտեսական մեծ նշանակություն: Մեր ուսումնասիրության նպատակն է եղել՝ պարզել խոզանացան հինգ հիբրիդների ցանքի տարբեր ժամկետները և դրանց ազդեցությունը բերքի քանակի ու որակի վրա 5 և 6 դաշտյա շարահերկային ցանքաշրջանառություններում: Խոզանացան եգիպտացորենի նախորդները եղել են աշնանացան հացահատիկները (գարի և ցորեններ):

Արարատյան հարթավայրի պայմաններում աշնանացան հացահատիկների վեգետացիան հիմնականում ավարտված է հունիսի վերջին տասնօրյակում, բացառությամբ առանձին տարիների, երբ վեգետացիայի տևողությունը երկարում է, կախված տարվա եղանակից:

Կան առանձին սորտեր էլ, որոնք վաղահաս են և դաշտը ազատում են ավելի վաղ ժամկետում: Մեր ուսումնասիրած հացահատիկներից ամենից կարճ վեգետացիա ունեցել են Բեզոստայա—1 և գարու նախիջևան դանի սորտերը: Այս երկու սորտերը դաշտը ազատում են հունիսի վերջին տասնօրյակում, որը հնարավորություն է ստեղծում խոզանացան եգիպտացորենի ցանքը սկսելու ավելի վաղ ժամկետում:

Փորձի մեթոդիկան և սխեման: Ինչպես նշվեց վերևում, ուսումնասիրության համար ընտրվել են հինգ տարբեր հիբրիդներ և ցանքի երեք ժամկետներ:

Փորձերը դրվել են 3-կրկնողությամբ, երեք ժամկետով և հինգ տարբերակով: Ցուրաքանչյուր փորձամարզ ունեցել է 320 մ² տարածություն: Բոլոր փորձերի համար հատկացվել է 3.3.5.320=14400 մ² տարածություն: Ցանքի համար վերցված եգիպտացորենի բոլոր հիբրիդների սերմերը ունեցել են ցանքային բարձր հատկություններ:

Ցանքի սկեման հետևյալ է՝

1-ին ժամկետի ցանքը կատարվել է 1/7, ուր ցանվել են՝ ՎԻՐ—156, ՎԻՐ—42, Գլորիա×44×29, Գլորիա×Բոկովինյան—31, Գլորիա×Վորոնեժի—96:

Նրկրորդ ժամկետի ցանքը կատարվել է 8/7, իսկ երրորդը՝ 16/7: Բոլոր ժամկետներում ցանվել են նույն հիբրիդները:

Խոզանացան եգիպտացորենի դաշտերում կիրառված նախացանֆային, ցանֆային և հետցանֆային միջոցառումները: Աշնանացան հացահատիկների բերքահավաքից հետո դաշտի տարբեր տեղերից հողի 0—30 սմ խորությունից, վերցվել է հողի նմուշներ, որոնցում որոշվել է՝ ազոտը, ֆոսֆորը, հումուսը, Биологический журнал Армении, XXIV, № 7—6

կալիումը, և դաշտային խոնավությունը: Անալիզի արդյունքները շնորհիվ բերում դեռևս ավարտված չլինելու պատճառով:

Հողի նմուշը վերցնելուց հետո դաշտը պարարտացվել է հանքային պարարտանյութերով՝ սուպերֆոսֆատ 400 կգ/հ, ամոնիակային սելիտրա 200 կգ/հ և կալիումական աղ 150 կգ/հ նորմաներով: Պարարտացումից հետո դաշտը վարվել է 25—27 սմ խորությամբ, որից հետո կատարվել է հարթեցում ու փոցխում, ապա բաժանվել է համապատասխան փորձամարզերի:

Երեք ժամկետների ցանքերը կատարվել են վեց շարքանի կախովի շարքացանով, շարքը-շարքից 70 սմ հեռավորությամբ: Ցանքից հետո տրվել է 1-ին ջուրը (ծլաջուրը), հետագա ջրումները կատարվել են ըստ բույսերի պահանջի:

Բույսերի խնամքի աշխատանքները վեգետացիայի ընթացքում կատարվել է 2-կուլտիվացիա, 2 փխրեցում, մեկ սնուցում ամոնիակային սելիտրայով հեկտարին 150 կգ, քիմիական քաղհան «Կրոտիլին» հիբրիցիդով 0,8 կգ/հ նորմայով: 3—4 տերևի առաջացման փուլում կատարվել է նոսրացում բույսերից թողնելով 25 սմ հեռավորության վրա: Վեգետացիայի ընթացքում կատարվել է ֆենոլոգիական դիտողություններ չափումներ և հաշվումներ բույսերի անցման հիմնական փուլերում:

Ստացված արդյունքների ֆենադիումը: Վեգետացիայի ընթացքում կատարված ֆենոլոգիական դիտումների արդյունքներից պարզվել է, որ տարբեր հիբրիդներ տարբեր ժամկետներում ցանելու դեպքում ունենում են տարբեր վեգետացիոն տևողություն: Ստացված արդյունքներից պարզվում է, որ երկու տարվա ուսումնասիրություններում, միջին տվյալներով, առաջնությունը պատկանում է հուլիսի 1—8 ընկած ժամկետի ցանքերին, իսկ հիբրիդներից՝ գլորիաններին, բանի որ $\text{Գլորիա} \times 44 \times 29$, $\text{Գլորիա} \times \text{Բուկովինյան}$ —31 և $\text{Գլորիա} \times \text{Վորոնեժի}$ —96 հիբրիդներից ստացվել է հասուն կողրեր և վեգե-
գլորիաններին, բանի որ $\text{Գլորիա} \times 44 \times 289$, $\text{Գլորիա} \times \text{Բուկովինյան}$ —31 մոմային և կաթնամոմային հասունացման աստիճանին, այսինքն վեգետացիան լրիվ չի ավարտվել: Բերքատվության տվյալները ապացուցում են I ժամկետի ցանքերի առավելությունը II և III ժամկետների նկատմամբ, իսկ հիբրիդներից՝ առավելությունը այս ժամկետում, նույնպես պատկանում է Գլորիաններին:

Բերքատվության տվյալների հաշվարկը կատարվել է փաստացի բերքը կշռելու միջոցով, որը ստուգվել է վերցրած խուրձ նմուշների (մետրովկաների) անալիզի միջոցով:

Աղյուսակ 1-ում բերված են 1968—69 թթ. խողանացան եգիպտացորենի տարբեր ժամկետներում ստացված բերքատվության միջին տվյալները:

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ցանքի տարբեր ժամկետներում խողանացան եգիպտացորենի միևնույն հիբրիդներից ստացվում է տարբեր բերքատվության ցուցանիշներ: Այսպես, ուսումնասիրվող ՎԻՐ—156, ՎԻՐ—42, $\text{Գլորիա} \times 44 \times 29$, $\text{Գլորիա} \times \text{Բուկովինյան}$ 31 և $\text{Գլորիա} \times \text{Վորոնեժի}$ 96 հիբրիդները, ցանքի տարբեր ժամկետներում ունեցել են տարբեր ցուցանիշներ:

Առաջին ժամկետում (1/7) ցանված ՎԻՐ—156 և ՎԻՐ—42 հիբրիդներից ստացվել է 529,2, 541,8 ց/հ կանաչ զանգվածի միջին բերք, իսկ Գլորիաններից՝ համապատասխանաբար՝ 395,9, 355,9, 318,9 ց/հ կանաչ զանգվածի և մինչև

Ա զ յ ու ա կ 1

Տարբեր ժամկետներում ցանված խողանացան եգիպտացորենի տարբեր հիբրիդներից ստացված բերքատվության միջին տվյալները (1968—1969 թթ.)

Փորձարկվող հիբրիդները	Բույսերի բարձրությունը, սմ	Խոտի կշիռը, գ	Տերևների կշիռը	Կողբերի կշիռը, գ	Ցողունների կշիռը, գ	Ստացված բերքը, ց/հ	
						" ր ի ց	
						լրիվ հասուն հատիկ	կանաչ զանգված

առաջին ժամկետ 1/7

ՎԻՐ 156	122	5418,8	865,0	2245,3	2318,2	—	541,8
ՎԻՐ 42	179	5292,5	981,3	1883,3	2428,1	—	229,2
Գլորիա 44.29	168	4362,5	846,6	1756,6	1783,3	42,3	395,9
Գլորիա Բուկովինյան 31	165	3777,0	536,6	1440,0	1740,6	40,6	355,9
Գլորիա Վորոնեժի 96	191	3560,0	583,0	1530,3	1473,3	37,2	218,9

Երկրորդ ժամկետ 8/7

ՎԻՐ 156	177	4587,0	862,5	1645,0	2080,0	—	458,7
ՎԻՐ 42	176	4265,0	805,0	1995,0	2065,5	—	407,7
Գլորիա 44.29	160	3653	650,0	1297,0	1866,4	—	965,0
Գլորիա Բուկովինյան 31	157	3300,0	688,0	1203,0	1412,4	—	330,0
Գլորիա Վորոնեժի 96	153	3285,0	745,0	1231,0	1309,1	—	328,5

Երրորդ ժամկետ 16/7

ՎԻՐ 156	175	3955,0	925	1282,0	1750,0	—	395,5
ՎԻՐ 42	170	3737,0	637	1225,0	1875,0	—	373,7
Գլորիա 44.29	148	3081,1	671	1270,0	1240,0	—	308,1
Գլորիա Բուկովինյան 31	145	2840,5	542	1085,5	1213,1	—	284,0
Գլորիա Վորոնեժի 96	143	2552,7	530	882,5	1140,2	—	255,2

42,3 ց/հ հատիկի բերք: 2-րդ ժամկետի ցանքից ստացվել է համապատասխանաբար՝ 458,7, 407,7 365,0, 330,0 և 328,5 ց/հ միայն կանաչ զանգվածի բերք, իսկ երրորդից՝ անհամեմատ ավելի ցածր ցուցանիշներ:

Ուստի ստացված արդյունքները հաստատում են, որ առաջնությունը պատկանում է առաջին ժամկետի ցանքերին, իսկ հիբրիդներից՝ Գլորիաներին, քանի որ նրանցից ստացվում է 40—42 ց/հ հատիկի և մինչև 395 ց/հ կանաչ զանգվածի բերք: Իսկ ՎԻՐ 156 և ՎԻՐ 42 ապահովել են միայն կանաչ զանգվածի բարձր բերք: Բացի բերքատվության տվյալներից, կատարված է սրնտեսական հաշվարկ, ըստ ցանքի տարբեր ժամկետների և նրանցից ստացված բերքատվության արդյունքների: Տնտեսական արդյունավետության տվյալները բերվում է աղ. 2-ում:

Յուրաքանչյուր միջոցառում, որը ներդրվում է արտադրության մեջ, սրնտեսապես պետք է լինի շահավետ, որի կիրառումով պիտի իջնի արտադրանքի ինքնարժեքը:

Աղ. 2-ի տվյալներից երևում է, որ խողանացան եգիպտացորենի տարբեր հիբրիդներ, տարբեր ժամկետներով ցանելու դեպքում, ստացվում է տարբեր քանակի շահույթ:

Այսպես, առաջին ժամկետում (1/7) ցանված խողանացան եգիպտացորենի ՎԻՐ—156, ՎԻՐ—142, Գլորիա $\times$ 44 $\times$ 29, Գլորիա $\times$ Բուկովինյան—31, և

Աղյուսակ 2

Խոզանապան եղիպտացորենի հիբրիդներից ստացված արդյունավետության տվյալները
բստ տարրերի ցանքի ժամկետների (1968—1969 թթ.)

Փորձարկվող հիբրիդներ	Մեկ հա-ից ստացված կանաչ զանգվածի քերքը, ց/հ	Նույնը վերածած կե- րամիավորի, ց	1 հա-ի վրա կատար- ված ծախսեր, ուր.	Մեկ ցեղուներ կերա- միավորի			Միկ հա-ից ստաց- ված շահույթը, ուր.	Շահութաբերման մե- կարդակը, %
				ինքնաբերքը, ուր.	պետ. հանձնման գինը, ուր.	ստացված շա- հույթը ուր.		
1/7								
ՎԻՐ-156	541,8	108,2	260,0	2,3	4,5	2,2	227,0	87
ՎԻՐ-142	529,2	105,8	258,0	2,4	4,5	2,1	220,0	85
Գլորիա 44-29	395,9	135,0	293,1	2,1	4,5	2,4	324,0	110
Գլորիա Բուկովինյան 31	355,9	125,0	281,2	2,2	4,5	2,3	287,0	102
Գլորիա Վորոնեժի 96	318,9	114,0	270,0	2,3	4,5	2,2	260,0	96
8/7								
ՎԻՐ-156	458,7	91,6	240	2,5	4,5	2,0	183,2	76
ԳԻՐ-42	407,7	81,4	228	2,8	4,5	1,7	138,3	65
Գլորիա 44-29	365,0	73,0	223	3,0	4,5	1,5	108,5	53
Գլորիա Բուկովինյան 31	330,0	66,6	208	3,1	4,5	1,4	93,2	45
Վլորիա Վորոնեժի 96	338,5	66,7	208	3,1	4,5	1,4	93,4	45
16/7								
ՎԻՐ-156	395,5	79,1	226	2,8	4,5	1,7	134,4	58
ՎԻՐ-42	373,7	74,6	224	2,9	4,5	1,6	119,3	53
Գլորիա 44-29	308,1	62,0	204	3,2	4,5	1,3	80,6	30
Գլորիա Բուկովինյան 31	284,0	57,0	192	3,3	4,5	1,2	75,1	33
Գլորիա Վորոնեժի 96	255,2	51,0	196	3,8	4,5	0,7	35,7	18

Գլորիա X Վորոնեժի 96 հիբրիդներից, ստացվել է համապատասխանաբար՝ 227,0, 220,0, 324,0, 287,0 և 260,0 ուրբուլ զուտ եկամուտ և 87,3, 85, 110, 102 և 96% շահութաբերություն, իսկ երկրորդ ժամկետում (8/7) ցանված նույն հիբրիդներից ստացվել է համապատասխանաբար 183,2, 138,3, 109,5, 93,2 և 93,4 ուրբուլ զուտ եկամուտ և 76, 65, 53, 45 և 45% շահութաբերու-
թյուն մեկ հեկտարի հաշվով: Երրորդ ժամկետում (16/7) ցանված նույն հիբ-
րիդներից ստացվել է ավելի ցածր ցուցանիշներ:

Այսպիսով, տնտեսական արդյունավետության տեսակետից առաջնությունը տրվում է հուլիսի 1-ին կատարված խոզանաքան եղիպտացորենի ցանքե-
րին և հատկապես Գլորիաներին:

Նկնելով վերոհիշյալից, առաջարկում ենք էջմիածնի շրջանի «Ոսկեհատ»
ուսումնա-փորձնական տնտեսության, Արարատյան հարթավայրի և համա-
նման այլ պայմաններում, ուր մշակվում է խոզանաքան եղիպտացորեն, առաջ-
նությունը տալ հուլիսի 1-ի ցանքի ժամկետին: Իսկ ուսումնասիրվող հիբ-
րիդներից Գլորիաներին: Իսկ որտեղ հնարավոր չէ ցանք կատարել հուլիսի 1-ին,
ժամկետ սահմանել մինչև հուլիսի 8-ը, դրանից ուշ ցանքը նպատակահարմար
չէ:

Արաժամանակ գտնում ենք, որ Արարատյան դաշտավայրում գարնանը ցանվող եգիպտացորենը պետք է փոխարինել խոզանացան եգիպտացորենով, քանի որ խոզանացանի ցանքի ճիշտ ժամկետների, վաղահաս հիբրիդների ճիշտ ընտրությամբ հնարավոր է դառնում ստանալ 40—43 ց/հ հատիկի և մինչև 400 ց/հ կանաչ զանգվածի բերք:

Ցանքաշրջանառություններում և ցանքաշրջանառություններից դուրս գարնանը ցանվող եգիպտացորենին հատկացվող տարածությունները հատկացնել ավելի թանկարժեք՝ խորդենու, բոստան-բանջարանոցային և այլ կուլտուրաների:

Հայկական դյուղատնտեսական ինստիտուտ

Ստացված է 1.11 1971 թ.

П. Н. АКОПЯН, Э. Л. АКОПЯН, А. Е. ЕГИАЗАРЯН,
В. В. АКОПЯН, А. В. ОГАНЕСЯН

РЕЗУЛЬТАТЫ ИЗУЧЕНИЯ СРОКОВ ПОСЕВА ПОЖНИВНОЙ КУКУРУЗЫ В СЕВООБОРОТАХ

Р е з ю м е

В условиях учхоза «Воскеат» Эчмиадзинского района фенологические наблюдения и биометрические измерения показали, что среди летних посевов кукурузы наиболее превосходят гибриды типа Глория, так как во время уборки (14/X) они заканчивают вегетацию и дают спелые зерна, а остальные гибриды, ВИР-156, ВИР-42, достигают только фазы молочной спелости и дают высокий урожай вегетативной массы.

По урожайности первое место занимают посевы первого срока сева, из пяти изученных гибридов получен более высокий урожай зеленой массы, а гибриды Глория-44, Глория Буковинский-31 и Глория Воронежский-96, кроме зеленой массы, дали также урожай зерна до 42,3 ц/га. Второе место занимают посевы второго срока (8/VII) сева, а последнее место—посевы, произведенные 16 июня. Первый посев экономически эффективен. Глория-44×29, Глория Буковинский-31 и Глория Воронежский-96 дали 260—324 руб. чистого дохода (96—110% нормы рентабельности), а гибриды ВИР-156 и ВИР-42—всего 220—227 руб (85—87% нормы рентабельности). Остальные посевы имели низкие показатели.

Исходя из вышесказанного, предлагаем в условиях учхоза «Воскеат» (в аналогичных условиях Араратской равнины, где возделывается кукуруза) производить посев первого июля и выбирать гибриды Глории. Там, где это невозможно, срок посева необходимо установить восьмого июля, позже производить посев нецелесообразно. Одновременно целесообразнее в условиях Араратской равнины весенний посев кукурузы заменить летним, так как подбором наилучших гибридов и сортов раннеоспелой кукурузы возможно получить урожай зерна от 40 до 43 ц/га и зеленой массы—до 400 ц/га.

В севооборотах и вне севооборота предусмотрено вместо кукурузы весеннего сева возделывать более ценные культуры—герань, овоще-бахчевые и др.